

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊԶԲ-ՓԾ/2024/L-29 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	հատուկ հանդերձանք — պարագաներ	Ծանոթություն-տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի	Ծանոթություն-տվյալ ապրանքը մակնիշ չունի	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Համազգեստը բաղկացած է տաբատից, բաճկոնից և կեպիից: Գործվածքի մակերեսային խտությունը առնվազն 220՝5 գրամ/մ2, բաղադրությունը՝ 65՝2% բամբակ, 35՝2% պոլիէսթեր: Գործվածքի տեսակը՝ <<TWILL>>, գույնը՝ մուգ փիրուզագույն (կանաչակապտագույն): Կտորի երանգը նախապես համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Բաճկոնը՝ միալանջ, կոճկվում է կենտրոնական կոճկվածքով՝ սև գույնի երկկողմանի տրակտոր տեսակի երիզաշղթայով: Օձիքը՝

5+/-0,5սմ լայնությամբ, ծալովի.
Օձիքի միացման կարում մշակված է
կախիչ: Բաճկոնի առաջնամասի
կողային հատվածներում
ներկարված են մեկական թեք
գրպաններ՝ շղթայով փակվող, իսկ
կրծքավանդակի մասում 2 ծավալուն
գրպաններ՝ կափույրներով:
Կափույրները փակվում են
դարձերեսին և գրպանների
վերնամասում մշակված կաչուն
ժապավեններով: Բաճկոնի աստառը
սև կամ մուգ փիրուզագույն,
մետաքսե գործվածքից: Կրծքամասի
գրպանների լայնությունը՝ 14սմ,
երկարությունը՝ 16սմ (շեղում
+/-2սմ) տեղակայված են
կենտրոնական ուղղահայաց կարից
5-6սմ հեռավորության վրա:
Կրծքամասի ձախ գրպանի
կափույրի վրա՝ ստորին եզրից 1սմ
հեռավորությամբ, կարվում են
12X2.5սմ չափսով սև գույնի կաչուն
ժապավեն: Ձախ գրպանի կափույրի
վրա տեղադրվում է 12.5X2.5 սմ
չափով սև գույնի՝ վրան բեժ թելով
ասեղնագործված «արյան կարգ»
տարբերանշանը: Աջ թևքին՝
ուսագլխից 7 սմ ներքև, կարված է

ՓԾ թևքի ասեղնագործված տարբերանշանը: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում մշակված են 2 կամրջակներ և 2 փակօղակներ: Բաճկոնի կողային ստորին հատվածներում և թևքերի վերջավորություններում գործվածքը մշակված է 5-6սմ լայնության ռետինե ժապավեններով: Բաճկոնի մեջքի կենտրոնական հատվածում օձիքի միացման կարից 13սմ հեռավորությամբ, սպիտակ թելով, 4X2.5X0.3սմ (բարձրություն X լայնություն X հաստություն) չափի տառատեսակով ասեղնագործված է «ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»:

Բաճկոնի վրայի բոլոր տարբերանշանները ամրացվում (կարվում) են տարբերանշանի վրա ասեղնագործված եզրակարերին համապատասխան գույներով /բեժ/:

Տաբատը՝ ազատթող փողքերով, առաջնամասում 2 կողային ներկարված գրպաններով, հետևի աջ կողմում ներկարված 14X14սմ չափի մեկ գրպանով: Գուլֆիկը շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով:

Գոտին մշակված է 6 կամրջակով և գոտու կողային հատվածներում չափը կարգավորող 2 ռեզինե ժապավեններով՝ 5 ± 0.5 սմ լայնությամբ: Գոտին ամրանում է կոճակով: Կեպին՝ աստառով, կազմված է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից և հատակից: Կողամասերը մշակվում են առնվազն 3 մմ հաստության սոսնձային կտորից միջադիրով: Հովհարը միջադրված է առնվազն 3 մմ հաստության պլաստիկ, ճկվող միջադիրով: Գլխարկահատակի կենտրոնում ներսի կողմից, դրոշմվում է չափսը և արտադրողի անվանումը: Հովհարի եզրից 1 սմ խորությամբ մշակվում է զարդակար: Հովհարի լայնությունը կենտրոնական մասում՝ 7 ± 0.5 սմ: Հետնամասում երկկողմանի մշակված է պլաստմասե չափսի կարգավորիչ: Գլխարկաբոլորքի կենտրոնում մշակված է խորհրդանշանը շրջանաձև /կտրամադրվի Պատվիրատուի կողմից/, 56 ± 1 մմ տրամագծով, սև կտորի վրա ասեղնագործված: Համազգեստի չափսերը

				<p>խտության, ներկի կայունության վերաբերյալ լաբորատոր հետազոտության եզրակացություն՝ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպությունից: Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում Մատակարարը պարտավոր է Պատվիրատուի պահանջով դրանք վերացնել:</p>
--	--	--	--	---